ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԾՐԱԳԻՐ» ՓՈԽԱՌՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 13 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), Վ. Պողոսյանի,

մասնակցությամբ՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի փետրվարի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության երրորդ ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2012 թվականի մարտի 2-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով փոխառության համաձայնագիրը եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության երրորդ ծրագիր» փոխառության համաձայնագիրն (Փոխառության համաձայնագիր) ստորագրվել է 2012 թվականի փետրվարի 15-ին:

2. Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկը (Բանկ) Հայաստանի Հանրապետությանը (Փոխառու) տրամադրում է երեսուն միլիոն (30.000.000) ԱՄՆ դոլարի չափով փոխառություն՝ Փոխառության համաձայնագրում սահմանված պայմաններով եւ կարգով՝ «Զարգացման քաղաքականության երրորդ ծրագրին» օժանդակելու համար:

3. Փոխառության համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը, մասնավորապես, ստանձնում է հետեւյալ պարտավորությունները.

ա) վճարել սկզբնավճար՝ փոխառության գումարի մեկ տոկոսի քառորդ մասին (0,25 տոկոս) հավասար չափով.

բ) վճարել տոկոսագումար, որի դրույքաչափը հավասար է փոխառության արժույթի կողմնորոշիչ դրույքաչափին՝ գումարած փոփոխական տարբերությունը՝ պայմանով, որ փոխառության ողջ մայր գումարի կամ դրա որեւէ մասի փոխարկման դեպքում, փոխարկման ժամանակահատվածում Փոխառուի կողմից այդպիսի գումարի վճարման ենթակա տոկոսը կորոշվի Փոխառության համաձայնագրով սահմանված կարգով.

գ) սկսած 2022 թվականի հուլիսի 15-ից մինչեւ 2036 թվականի հուլիսի 15-ը յուրաքանչյուր տարվա հունվարի 15-ին եւ հուլիսի 15-ին հետ վճարել փոխառության մայր գումարը՝ 3,33 տոկոս վճարման մասնաբաժնով, իսկ 2037 թվականի հունվարի 15-ին՝ 3,43 տոկոս վճարման մասնաբաժնով.

դ) երաշխավորել, որ փոխառության միջոցները չեն օգտագործվի Փոխառության համաձայնագրում սահմանված բացառված ծախսերը ֆինանսավորելու համար, իսկ եթե ցանկացած ժամանակ Բանկը որոշում է, որ փոխառության որեւէ գումար օգտագործվել է բացառված ծախսեր վճարելու նպատակով, ապա Բանկից ծանուցում ստանալով, անհապաղ Բանկին վերադարձնել այդ վճարման գումարին համարժեք գումար:

4. Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2012 թվականի մարտի 1-ին հավանություն է տվել սույն գործով քննության առարկա Փոխառության համաձայնագրին:

5. Փոխառության համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8 եւ 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են ստեղծելու բարենպաստ պայմաններ տնտեսական գործունեության ազատության եւ ազատ տնտեսական մրցակցության ծավալման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին եւ 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. 2012 թվականի փետրվարի 15-ին ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի միջեւ «Զարգացման քաղաքականության երրորդ ծրագիր» փոխառության համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 մարտի 2012 թվականի
ՍԴՈ- 1017